ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/95

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Ռեդինետ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Քարամյանի,
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Ս. Պետրոսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10295-2019 գրությամբ «Ռեդինետ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.06.2019թ. թիվ ՊՆ/02/895-2019 գրության հիման վրա, 19.06.2019թ. «Ռեդինետ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության 14.06.2019թ. թիվ ՊՆ/02/895-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «Ռեդինետ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին 2019թ. մայիսի 21-ին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ռեդինետ» ՓԲԸ-ի գնման հայտը:»:

Կից ներկայացվել են «Ռեդինետ» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. **<u>«Ռեդինետ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 21.06.2019թ. գրությամբ դիմել է «Ռեդինետ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ

/26/10295-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Ռեդինետ» ՓԲԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «Ռեդինետ» ՓԲԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին 2019թ, մայիսի 21-ին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնլու վերաբերյալ:

«Ռեդինետ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում, սույն թվականի մայիսի 23-ին, էլ.փոստով ուղարկել է բոլոր պահանջվող փաստաթղթերը, որոնք, դատելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգի բովանդակությունից (ծածկագիր՝ ՍՑ-ԼՕ-2019/95, 19.06.2019թ.) չեն հասել հասցեատիրոջը: Որպես ապացույց կից ներկայացնում ենք «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ուղարկված համապատասխան էլ. նամակի սքրինշոթը:»:

Ելնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Ռեդինետ» ՓԲԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից նավիգացիոն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռեդինետ» ՓԲԸ-ն:

«Ռեդինետ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում որպես ընկերության էլեկտրոնային փոստի

հասցե նշել է a.balyan@redinet.am, k.avagyan@redinet.am և sales@redinet.am էլեկտրոնային փոստի հասցեները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.05.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռեդինետ» ՓԲԸ-ն ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 21.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Մասնակցին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ռեդինետ» ՓԲԸ-ն:*

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի k.avagyan@redinet.am էլեկտրոնային փոստի արտատպման համաձայն՝ Մասնակիցը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ a.grigoryan@mil.am, 23.05.2019թ.-ին ժամը 04:44-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հավելված 6-ը և 6.1-ը:

Հանձնաժողովի 03.06.2019թ.-ին թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ռեդինետ» ՓԲԸ-ն 2019թ. Մայիսի 21-ին ծանուցվել է հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, որի հիման վրա հանձնաժողովն որոշել է մերժել Մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10295-2019 գրությամբ «Ռեդինետ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ .... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նավիգացիոն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռեդինետ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ 21.05.2019թ.-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Մասնակցին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ռեդինետ» ՓԲԸ-ն:*

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:»:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի k.avagyan@redinet.am էլեկտրոնային փոստի արտատպման համաձայն՝ Մասնակիցը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ a.grigoryan@mil.am, 23.05.2019թ.-ին ժամը 04:44-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հավելված 6-ը և 6.1-ը:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Ռեդինետ» ՓԲԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ քարտուղարի a.grigoryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեից 21.05.2019թ.-ին ստանալով վերը նշված կարգի կետին համապատասխան ծանուցում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ 23.05.2019թ.-ին /3 աշխատանքային օրվա ընթացքում/ Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հավելված 6-ը և 6.1-ը:

Տվյալ դեպքում առկա է «Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը քարտուղարի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ապացույցը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը չի կարող համարվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Ռեդինետ» ՓԲԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.06.2019թ. թիվ /26/10295-2019 գրությամբ «Ռեդինետ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**